

Հովհաննես Ջատիկյան

ԵՐԿՐՈՐԴ ՃԱԿԱՏԻ ԲԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ: ԴԱՇՆԱԿԻՑՆԵՐԻ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐԱՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՊԱՐԱՆՋՆԵՐԻ ՄԵՐԺՄԱՆ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ

**Բանալի բառեր - ԽՍՀՄ, ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, հարձակում, բանակցություն,
ջախջախում, ճակատ, տարածայնություն, դաշինք:**

Երկրորդ աշխատամարտի կարևոր իրադարձություններից էր հակահիտլերյան դաշինքի ստեղծումը: 1939 թ. սեպտեմբերի 1-ին Լեհաստանի վրա Գերմանիայի հարձակման ժամանակ Անգլիան և Ֆրանսիան, որ ստեղծել էին համադաշնություն, հանդես եկան Լեհաստանի պաշտպանությամբ: Սակայն որևէ գործնական քայլ չձեռնարկած՝ 1940 թ. Ֆրանսիայի պարտությունից հետո այդ համադաշնությունը փլուզվեց:

ԽՍՀՄ-ի վրա Գերմանիայի հարձակման օրը Մեծ Բրիտանիայի վարչապետ Ու.Չերչիլը հայտարարեց իր երկրի կողմից Ռուսաստանին և ռուս ժողովրդին օգնելու մասին: Հունիսի 24-ին նման հայտարարությամբ հանդես եկավ ԱՄՆ-ի նախագահ Ֆ.Ռուզվելտը: Երկու երկրները իրենց պատրաստակամությունն էին հայտնում ԽՍՀՄ-ին օգնելու, որովհետև արդեն մեկ տարի շարունակ Անգլիան ենթարկվում էր օդային հարձակման և այն միտքն էր հասունանում, որ գերմանական ուժերը Անգլիայի ափ կիջնեն, և կսկսվի ցամաքային պատերազմը: Գերմանիայի դաշնակից ճապոնիան Խաղաղ օվկիանոսում և Հարավ Արևելյան Ասիայում սպառնում էր կործանել ԱՄՆ-ի գաղութային տիրապետությունն ու ազդեցության գոտիները: Ահա թե ինչու զգալով գերմանական բլոկի ջախջախման անհրաժեշտությունը, Մեծ Բրիտանիան և ԱՄՆ-ն հանդես եկան ԽՍՀՄ-ին պաշտպանելու և օգնելու հայտարարությամբ:

Հետագա գործունեության խնդիրները քննելու նպատակով 1941 թ. օգոստոսին Ատլանտյան օվկիանոսում գտնվող անգլիական «Արքայազն Ուելսկիի» նավի վրա սկսվեցին Մեծ Բրիտանիայի և ԱՄՆ բանակցությունները: Քննարկելով ստեղծված իրավիճակը՝ կողմերը հանրահռչակեցին մի շարք կարևոր դրույթներ, որոնք առնչվում էին պատերազմի, ուրիշի տարածքները գրավելու, ժողովուրդներին իրենց հետագա ճակատագիրը տնօրինելու իրավունքի, համաշխարհային առևտրական հարաբերություններին մասնակցելու, միջազգային հարաբերություններում ուժի գործադրումը արգելելու, զավթիչ երկրներին զինաթափելու, ժողովուրդների անկախությունը վերականգնելու, անվտանգության ապահովման երաշխիքներ տրամադրելու և այլն հարցերի հետ, որոնք հայտնի են «Ատլանտյան խարտիա»

անունով: Այն ստորագրվեց 1941թ. օգոստոսի 14-ին: Նույն թվականի սեպտեմբերի 24-ին, Լոնդոնում գումարված դաշնակցային խորհրդակցության ժամանակ, ԽՍՀՄ-ը միացավ Խարտիային: Բանակցությունների ժամանակ, սակայն, ղեկավարվելով Մեծ Բրիտանիայի շահերով՝ Չերչիլը հարցականի տակ թողեց 1941թ. հունիսի 22-ի դրությամբ ԽՍՀՄ սահմանների ճանաչման հարցը, նկատի ունենալով Մերձբալթյան հանրապետությունների, Արևմտյան Ուկրաինայի և Բելառուսիայի, Բեսարաբիայի, Չյուսիսային Բուկովինայի, Ֆինլանդիայի մի մասի 1939-1940թթ. ԽՍՀՄ կազմի մեջ ընդգրկվելու փաստը: ԽՍՀՄ ղեկավարությունը չէր կարող անտեսել այդ հարցը և որոշվեց այն լուծել անմիջական շփման միջոցով: 1941թ. դեկտեմբերին Մոսկվայում սկսվեց Անգլիայի ԱԳ նախարար Ա.Իդենի հետ բանակցությունները: Դեկտեմբերի 16-ի հանդիպման ժամանակ Ստալինը նախարարին առաջարկեց դաշնակցային պայմանագրին կցել գաղտնի արձանագրություն: Յետագայում, իր հուշերում Ա.Իդենը գրում է, որ ինքը լիազորություն չունեի նման արձանագրություն կազմելու և այն պետք է համաձայնեցվեր իր կառավարության հետ, ուստի մերժեց Ստալինի առաջարկը: Ապա Ա.Իդենը հիշեցրել է Ստալինին, որ այդ առթիվ կա նաև Ֆ.Ռուզվելտի կարծիքը. «Ռուզվելտը, դեռևս մինչ Ռուսաստանը հարձակման կենթարկվեր, ուղերձ էր ուղարկել, խնդրելով առանց խորհրդակցելու չկնքել որևէ գաղտնի համաձայնություն, որը կապված կլինի Եվրոպայի հետպատերազմյան վերակազմավորման հետ»¹:

ԽՍՀՄ սահմանների հարցում առաջացած խնդրի մասին Ա.Իդենը տեղեկացնում է ԱՄՆ-ում գտնվող Ու.Չերչիլին: Յետագայում ԽՍՀՄ դեսպան Ի.Մայսկու հետ հանդիպման ժամանակ Ու.Չերչիլը հայտնում է, որ ինքը սկզբից էլ չէր ցանկանում ճանաչել ԽՍՀՄ-ի 1941թ. սահմանը, բայց ինչպես նշում է իր հուշերում դեսպանը, Չերչիլը համաձայնվում է, որովհետև Ստալինը համառում էր այդ հարցում և տալիս է իր համաձայնությունը², ինչը հաստատվում է Չերչիլի՝ Իդենին ուղարկած հեռագրում. «Մենք միշտ ճանաչել ենք Ռուսաստանի գոյություն ունեցող սահմանը միայն դե-ֆակտո: Դրանք ձեռք են բերվել զավթումների արդյունքում»³:

Խնդիրը քննարկվել է նաև Թեհրանի խորհրդակցության ժամանակ, և Չերչիլը այս անգամ առաջարկել է Մեծբալթյան երկրներում անցկացնել քվեարկություն:

Այս վիճահարույց հարցին անդրադարձանք սուսկ այն պատճառով, որ հիմնավորվի այն տեսակետը, թե սկզբից ևեթ դաշնակիցների հարաբերությունները շաղախված էին հակասություններով, որտեղ առաջին ջութակի դերը կատարում էր հավատավոր հակաբոլշևիկ, հակասովետական Մեծ Բրիտանիայի վարչապետ Ու.Չերչիլը: Բնական է, որ նման հարաբերություն ունեցող երկրների միավորումը չէր տալու ցանկալի արդյունք

¹ The Eden, Memoira. The Reckoning L., 1965, p. 289.

² ՌԴ Արտաքին քաղաքականության արխիվ, ֆ. 017a, օր. V, ք. V, ժ. V, և. V:

³ Черчилль У., Вторая мировая война, т. 3, М., 1955, с. 674-675.

և գնալով խորացող սառնությունը ի վերջո վերածվելու էր թշնամանքի: Ահա թե ինչու ԽՍՀՄ-ի պաշտպանությամբ հանդես եկած Մեծ Բրիտանիան ու ԱՄՆ-ը շուրջ երեք տարի ձգձգում էին Երկրորդ ճակատի բացումը, որպեսզի առավել թուլացնեն ԽՍՀՄ-ն և նրա թելադրեն իրենց կամքը:

Երկրորդ ճակատի բացման առթիվ առաջինը հանդես եկավ ԽՍՀՄ-ի կառավարությունը Մեծ Բրիտանիայի վարչապետին ուղղված 1941թ. հուլիսի 18-ի ուղերձով, որտեղ խոսելով ընդհանուր թշնամու դեմ համատեղ պայքարի մասին, Ստալինը ընդգծում է. «...Ֆրանսիայի հյուսիսում ճակատի բացումով Հիտլերի ուժերը Արևելքից կտեղափոխվեն և «անհնար կդառնար Հիտլերի ներխուժումը Անգլիա»¹:

Գերմանիան, որ ուժերի գերակշիռ մասը կենտրոնացրել էր ԽՍՀՄ-ի դեմ, հնարավորություն էր տալիս եվրոպական դաշնակիցներին ակտիվ գործողություններ ծավալել: Սակայն Չերչիլը անտեսեց առաջարկը ուժերի անբավարարության և դեսանտային ուժերի հնարավոր պարտությունը նկատի ունենալով: 1942թ. անցավ ԱՄՆ-ի և Անգլիայի հետ բանակցություններով: Բայց վճռական գործողություններ ճակատի բացման ուղղությամբ չգրանցվեցին: Ավելին, չնայած համաձայնագրերին, հեռագրերին, խոստումներին, 1942 թ. հունիսի 17-25 Չերչիլի ԱՄՆ կատարած այցից հետո, մերժվեց 1942 թ. Երկրորդ ճակատ բացելու միտքը և այն տեղափոխվեց 1943թ., ինչը հաստատվեց Չերչիլի 1942թ. հուլիսի 10-ի Լոնդոնում Մոլոտովի հետ հանդիպման և 1942 թ. օգոստոսին Մոսկվա կատարած այցի ժամանակ²:

1942 թ. փերվար-մարտ ամիսներին ԱՄՆ-ի զինվորական շտաբը մշակեց մի պլան, որով առաջարկվում էր Անգլիա տեղափոխել համապատասխան քանակի զորք և տեխնիկական նախապատրաստությունից հետո ներխուժել Հյուսիսային Ֆրանսիա: Այդ նպատակով 1942թ. ապրիլի 2-ին ԱՄՆ նախագահ Ռուզվելտը Անգլիա ուղարկեց զինվորական պատվիրակություն, որը տանում էր Չերչիլին ուղղված միասնական ճակատ ստեղծելու նախագահի նամակը. «Ձեր և իմ ժողովուրդները պահանջում են ստեղծել ճակատ, որը կթուլացնի ռուսների վրա ճնշումը, մեր ժողովուրդները բավականին խելացի են, որպեսզի հասկանան, որ այսօր ռուսները ավելի շատ գերմանացի են սպանում և ոչնչացնում մեծաթիվ ամրություններ, քան մենք երկուսով միասին: Եթե անգամ ամբողջական հաջողություն չլինի, խոշոր նպատակին կհասնենք»³: Այնուհետև Ռուզվելտը հանդիպում է ԽՍՀՄ դեսպանության խորհրդական Ա.Գրոմիկոյի հետ և նրան հանձնում ուղերձ, որով Երկրորդ ճակատի բացման հարցերը քննարկելու համար առաջարկվում էր ԱՄՆ ուղարկել Մոլոտովի գլխավորությամբ

¹ Переписка Председателя Совета Министров СССР с президентом США и премьер-министром Великобритании во время Великой Отечественной войны 1941-1945 гг., т. 1, М., 1976, с. 19 (այսուհետ՝ «Переписка...»).

² Стен` Советско-американские отношения во время Великой Отечественной войны, 1941-1945, т. 1, М., 1984, с. 248, 265-271.

³ «Переписка...», т. 2, М., 1976, с. 5.

պատվիրակություն: Ռուզվելտի և Չերչիլի հետ Մոլոտովի հանդիպումներից հետո ստորագրվեց համատեղ հայտարարություն, որը հայտնում էր, թե 1942թ. Եվրոպայում Երկրորդ ճակատի բացման հարցում ձեռք է բերվել համաձայնություն: Սակայն Մոլոտովի հետ հանդիպումից հետո Չերչիլը մեկնեց ԱՄՆ և համոզեց նախագահ Ռուզվելտին, որ Երկրորդ ճակատը չբացվի 1942 թ. և բացելու դեպքում էլ իրականացվի ոչ թե Եվրոպայում, այլ Հյուսիսային Աֆրիկայում¹:

Այս առթիվ գնահատելի տեղեկություն է հաղորդում ԱՄՆ-ում ԽՍՀՄ դեսպան Լիտվինովը: Նա Մոսկվա ուղարկած զեկուցագրում հայտնում է. «Երկրորդ ճակատի առթիվ նախագահի դիրքորոշումը վերջին ժամանակներում ավելի է կարծրացել: Եթե նախկինում այդ թեմայի առթիվ անփոփոխ հասկացնում էր, որ իր անձնական կարծիքով անհրաժեշտ է ավի իջնել Եվրոպայում, որին դիմադրում են անգլիացիներն ու նրանց զինվորական խորհրդականները, ապա նրա հետ իմ վերջին զրույցի ժամանակ նա փորձում էր իրեն դնել այլ մարդու դիրքում, որ բացարձակապես համոզված է ներկա ժամանակում ավի իջնելու անհրաժեշտությունը... Կասկած չի հարուցում, որ նա այդ հարցում ընդունում է Չերչիլի և նրա անձնական ռազմածովային շրջապատի կարծիքը»²:

1943 թ. հունվարին Կասաբլանկայի խորհրդակցության ժամանակ հաստատվեց ԽՍՀՄ-ի դեսպանի հաղորդումը, չնայած Չերչիլը Ստալինին ապակողմնորոշելու և հուսադրելու նպատակով տեղեկացնում էր, որ Երկրորդ ճակատը կբացվի 1943 թվականին, սակայն ավելացնում էր՝ «եթե գործողությունը հետաձգվի եղանակի կամ այլ պատճառներով, ապա այն կնախապատրաստվի առավել խոշոր ուժերով սեպտեմբերին»³:

Չերչիլի խաբկանքը բացահայտեց ԱՄՆ նախագահ Ռուզվելտը, երբ Անգլիայի վարչապետի հետ 1943թ. մայիսին կայացած հերթական հանդիպումից հետո Ստալինին հայտնեց, որ Երկրորդ ճակատի բացումը կիրականանա միայն 1944 թ.: Բացի այդ, հանդիպման ժամանակ, Չերչիլի առաջարկով, մինչև 1944 թ. աշուն դադարեցվում էր Լենդ-լեզի մատակարարումները հյուսիսային ուղղությամբ, ինչի առթիվ էլ 1943 թ. մարտի 30-ին տեղեկացվեց ԽՍՀՄ-ին:

Իրադարձությունների արագ փոփոխությունները, խորհրդային բանակի հաջողությունները Մեծ եռյակի փոխհարաբերությունները տարան նոր ուղղությամբ, որը արձանագրվեց 1943թ. նոյեմբերի 28 - դեկտեմբերի 1-ը Թեհրանի խորհրդակցությունում և անգլո-ամերիկյան կողմը անհանգստացած, որ կորցնում է նախաձեռնությունն ու բոլշևիկացման վտանգի տակ դնում Կենտրոնական ու Արևմտյան Եվրոպան,

¹ Տե՛ս՝ Тайны истории..., М., 1995, с. 258.

² Советско-английские отношения во время Великой Отечественной войны, 1941-1945, т. 1, М., 1984, с. 251.

³ Переписка..., т. 1, с. 110.

արագացրին Երկրորդ ճակատի բացման նախապատրաստությունները և 1944թ. հունիսի 6-ին գործողության մեջ դրվեց «Օվերլորդ» ծրագիրը, որին զուգահեռ խորհրդային բանակը սկսեց «Բագրատիոն» պլանի իրագործումը, ինչի շնորհիվ Գերմանիան հայտնվեց շրջապատման մեջ:

1942 թ. մայիսից 1944թ. հունիս ընկած ժամանակահատվածում, որը օգտագործվեց իբր Երկրորդ ճակատի բացման համար, ԽՍՀՄ-ը տվեց հինգ միլիոն զոհ, գերի, անհայտ կորած¹:

Իրականացնելով իրենց ծրագրերը՝ դաշնակիցները ոչ թե շահագրգռված էին պատերազմը հաղթական ավարտին հասցնելու ժամկետը կրճատելուն, այլ արգելքներ էին ստեղծում սովետական բանակի՝ դեպի Արևմուտք շարժման առաջ: Այժմ արդեն դաշնակիցների մոտ հարց է առաջանում «արժե արդյոք գործը հասցնել Երրորդ կայսրության լիակատար ջախջախմանը»²:

Այստեղ երևում է Հիտլերի անհամարձակությունը՝ Անգլիա ներխուժելու հարցում: Կարևոր մի հանգամանք, որը Չերչիլին հնարավորություն տվեց հպարտանալու իր երկրի անպարտելիությամբ.

- Փառք ծեր Անգլիային, խաղաղասեր և վատ նախապատրաստված, բայց վճռական և անվախ, երբ խոսքը գնում է պատվի մասին: Իմ ամբողջ էությունը լցվում է, և թվում է մեր ճակատագիրը տանում է այն ոլորտը, որը շատ հեռու է երկրային իրականությունից և ֆիզիկական շփումներից³:

Ավելի խորացնելով իր մտքերը, Չերչիլը հանգում է այն գաղափարին, որ Անգլիայի տոկունությունն էր ստիպում Հիտլերին հեռու մնալ ներխուժումից. «Հիտլերին չհաջողվեց ծնկի բերել կամ մվաճել Անգլիան: Հասկանալի է, որ մեր կողմն կանգնելու է մինչև վերջ»⁴: Այստեղ կարևորվեց այն հանգամանքը, որ Գերմանիան չկարողացավ ծովում ապահովել իր գերազանցությունը և չհամարձակվեց անցնել Լամանշի նեղուցը: Ուստի Գյորինգի պարծենկոտությունը համոզեց ֆյուրերին, որ անհրաժեշտ է հայացքն ուղղել դեպի Արևելք, ինչպես վարվեց Նապոլեոնը⁵:

Չերչիլը իր հակառուսական գաղափարախոսությունը շաղախելով կոմունիզմի նկատմամբ ատելությամբ, քննադատության սլաքը ուղղում էր Ստալինի դեմ, խորհրդագերմանական պայմանագրի դեմ, ԽՍՀՄ-ը անվանելով աշխարհամարտի սանձազերծողներից մեկը, արևմուտքի թշնամին, հատկապես լեհական հարցում չեզոք դիրքորոշման համար:

¹ Россия и СССР в войнах XX века, М., 2005, с. 296.

² Мельков В., Холодная война, Истоки и уроки, М., 2007, с. 42.

³ Вторая мировая война в воспоминаниях, М., 1990, с. 6

⁴ Նոյն տեղում, էջ 83:

⁵ Նոյն տեղում:

Չերչիլի ջանքերով հաղթանակեց այն տեսակետը, որ երկու դաշնակիցները՝ Մեծ Բրիտանիան և ԱՄՆ-ն, առանձին ի վիճակի են պատերազմը հասցնել հաղթական ավարտի և պետք է փակել դեպի Արևմտյան Եվրոպա ԽՍՀՄ-ի առաջխաղացումը:

Երկրորդ ճակատի բացումը անգլո-ամերիկյան կողմը օգտագործում էր աշխարհի նոր վերաբաժանման համար: Այդ հանելուկը բացահայտեց Չերչիլը 1944թ. հոկտեմբերին Մոսկվա կատարած այցի ժամանակ¹:

Ազդեցության շրջանների համար պայքարը գնալով խորանում էր՝ ավելի սրելով դաշնակիցների հակասությունները: Դաշնակիցները այժմ արդեն շտապում էին ԽՍՀՄ-ը կանգնեցնել կատարված փաստի առաջ: Այդ նպատակով էլ ծնվեց «Բեռնի դիպլոմա», որի էությունը անջատ բանակցությունների միջոցով Գերմանիան փրկելն էր: Գեներալ Կ.Վորֆի և Եվրոպայում ԱՄՆ-ի հետախուզության ղեկավար Ա.Դալլասի բանակցությունները սպասվելիք արդյունքը չապահովեցին: Սկսվեցին նաև Լեհաստանի, Դոնաստանի, ատոմային ռումբի հետ կապված խորհրդակցությունները:

1945 թ. արդեն բացահայտ էին դաշնակիցների հակասությունները, որոնք հայտնի են Չերչիլի խիստ գաղտնի «Անիմաստ» գործողություն անունով: Այստեղ ասվում է, որ ԽՍՀՄ վտանգ է ողջ ազատ աշխարհի համար, պետք է ստեղծել նոր ճակատ նրաների դեմ առաջ, այդ ճակատը պետք է ինչքան հնարավոր է տեղափոխել Արևելք: ԱՄՆ-ի, Անգլիայի համար գլխավոր նպատակը պետք է լինի Բեռլինը, Չեխոսլովակիայի ազատագրումը և ամերիկյան զորքի մուտքը Պրագա, ամբողջ Ավստրիան պետք է ղեկավարվի արևմուտքի կողմից, պետք է սրել Տիտոյի և Իտալիայի հարաբերությունները և այլն²:

1945 թ. ապրիլին, երբ Վիեննան, Բեռլինը, Պրագան անհասանելի էին Չերչիլի պլանին, վերջինս մշակեց ԽՍՀՄ դեմ նոր պատերազմի ծրագիրը, որի հիմնական նպատակն էր ԽՍՀՄ զրկել նոր պատերազմ մղելու հնարավորությունից և ստիպել «ենթարկվել Միացյալ Նահանգներին և Բրիտանիական կայսրությանը», սովետական զորքերը հեռացնել Լեհաստանից, մղել երկարատև և թանկարժեք տոտալ պատերազմ: Չերչիլի ծրագիրը կյանքի չկոչվեց և հետաձգվեց մինչև 1946 թ.: Հավելենք միայն, որ ԽՍՀՄ ղեկավարությունը տեղյակ էր այդ ծրագրին և պաշտպանական միջոցառումներ էր մշակում, թեև 11 միլիոնանոց բանակը կրճատեց մինչև 3 մլն և մի շարք երկրներից դուրս բերեց իր զորքերը³:

Չերչիլի հակասովետական, աշխարհակալական ձգտումները չիրականացան, բայց նա մինչև կյանքի վերջը մնաց այդ գաղափարների ազդեցության տակ՝ ցանկացած առիթը օգտագործելով իրեն ոգևորող մտքերի իրականացման համար: Այս

¹ История дипломатии, т. 1, М., 1975, с. 499.

² Черчилль У., Ընված գիրքը, с. 574.

³ Очерки истории российской внешней разведки, 1945-1965, в шести томах, т. 5, М., 2003, с. 20-21.

մտածողությունը նրան հասցնում է հիվանդության, ինչը հաստատում է նրա անձնական բժիշկը, հայտնելով, որ «պատերազմի վերջին տարիներին նրա քայլերը զգալի չափով եղել են նյարդային և ֆիզիկական թուլության արդյունք, հակառակ դեպքում դրանք անբացատրելի են»¹:

Երկրորդ աշխարհամարտը ահեղ փորձության էր բոլոր ժողովուրդների համար: Արյան, միլիոնավոր զոհերի գնով ձեռք էր բերվում մի հաղթանակ, որը արմատախիլ էր անում ֆաշիզմը, ազգայնամոլությունը, ցեղասպանությունը:

Եթե սկզբնական շրջանում անգլո-ամերիկյան կողմը կարծես անտարբեր էր նեղուցների հարցում ԽՍՀՄ-ի ձգտումների նկատմամբ, ապա դեպքերի զարգացումները հասան նրան, որ արևմտյան դաշնակիցները ճիշտ ընկալեցին ԽՍՀՄ-ի ծրագրերը՝ համարելով ռուսական ծավալապաշտության արթնացում, Միջերկրական ծով դուրս գալու փորձ և հովանավորության տակ առան «չեզոք» Թուրքիային ու մերժելով ԽՍՀՄ-ի պահանջները՝ իրականացրին նոր աշխարհակարգ ստեղծելու իրենց ծրագիրը:

Չայկական տարածքների պահանջը դուրս եկավ իր իսկ բովանդակության շրջանակից և համարվեց Մերձավոր ու Միջին Արևելք ներխուժելու ԽՍՀՄ քաղաքականության իրականացման սկզբնական, նախապատրաստական քայլ:

Պատերազմի հաղթական, ավարտական փուլում, երբ կիզակետին էին հասել հակասությունները, առանց նախապատրաստության ու իրավիճակի քննության բարձրացնել Չայկական հարցը, նշանակում էր հերթական անգամ դիվանագիտական զգրոցներ ուղարկել այն և կրկին անլուծելի թողնել:

ԽՍՀՄ ակնկալիքները չէին իրականանալու, հակասությունների ծանր բեռի տակ կքված դաշնակիցների հարաբերությունները գնալով սրվում էին և այս անգամ էլ նոր աշխարհակարգի հաստատման ջադագովները Չայկական հարցը դնում էին նոր քաղաքականության՝ «սառը պատերազմի» զոհասեղանին:

Оганнес Затикян, Вопросы открытия второго фронта. углубление противоречий союзников как условие отклонения требования армянских территорий - Когда стали очевидны программы Гитлера, для их уничтожения возникла идея создания антигитлеровского союза, который в 1942-1944гг. подвергшись испытаниям, был задействован к концу войны, когда между тремя странами, внешне представляющие мирное сосуществование, углублялись противоречия. В таких условиях СССР без подготовки вынес на арену свои притязания к Турции, стремясь отделить ее от Запада, фактором влияния чего было представлено требование армянских территорий, которое в подобной ситуации

¹ Трухеновский В.Г., Уинстон Черчилль, М., 2003, с. 354.

исключало положительного решения, и Армянский вопрос, в очередной раз, был отвергнут, что было оценено как часть экспансионных программ СССР.

Hovhannes Zatikyan, The problems of opening the second front. the deepening conflict between allies as a precondition for refusing territorial claims - When Hitler's programs became obvious the idea of creating an anti-Hitler alliance appeared. In 1942-1944 being subjected to many tests it was established at the end of the war. The three countries seemed to be in a peaceful coexistence, but the contradictions were deepening. In such circumstances the USSR delivered to the arena its claims against Turkey in an effort to separate it from the West, influencing factor of which was a claim of Armenian territories, which ruled in a similar situation excluded a positive decision, and the Armenian question, once again, was rejected. It was evaluated as part of an expansion program of the USSR.

Հովհաննես Ջատիկյան - Խաչատուր Աբովյանի թանգարանի տնօրեն: